

**ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ԵՂԻՇԵ
ՉԱՐԵՆՑԻ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ» ՊՈԵՄՈՒՄ**

Ա. Դ. ՇԻՐԻՆՅԱՆ

*ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի
հայ գրականության և լրագրության ամբիոնի հայցորդ*

Հայկական դիցաբանությունն իր ուրույն օրինաչափություններով ու ըմբռնումներով դրսևորվել է «Սասունցի Դավիթ» էպոսում՝ տեղ թողնելով նաև աստվածաշնչյան ֆրագմենտների համար, քանի որ էպոսը ձևավորվել է այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդն արդեն իսկ քրիստոնյա ու աստվածապաշտ էր: Էպոսն ունի ամբողջական կամ մասնակի բազմաթիվ գրական մշակումներ, որոնցից առանձնանում է Եղիշե Չարենցի «Սասունցի Դավիթը»: Հայտնի բանահավաք Կարո Մելիք-Օհանջանյանի հուշերում կարդում ենք, որ 1932 թվականին Չարենցը եռանդագին ուսումնասիրում էր էպոսի ժողովրդական պատումները՝ գրական մշակման ենթարկելով «Սասունցի Դավիթ» ճյուղը. «...մենք մի քանի անգամ հանդիպումներ ենք ունեցել... Մեր զրույցի առանցքը կազմում էր «Սասնա ծռերը»: Հենց այդ հանդիպումների ժամանակ էլ նա մի օր կարդաց իր «Սասունցի Դավիթ» պոեմի վարիանտներից մեկը: Իմ կարծիքս այն է, որ չէր հաջողվել: Վեճի բռնվեցինք: Վեպը գրական մշակության ենթարկելու հարցում մենք տրամադծորեն հակառակ դիրքերի վրա էինք կանգնած»¹: Չարենցն իր մշակման մեջ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը տեղափոխել է այլ հարթակ՝ նկարագրելով ներքին, դասակարգային պայքարը, ինչը ժամանակի թելադրանք էր: Պոեմը տպագրվել է 1933 թվականին, երբ դեռ պատումների մի սովոր մասը դեռ չկար:

Չարենցը հրամայական պահանջ էր համարում վեպի նոր պատումների հայտնաբերումն ու գրառումը: Ընկերական զրույցներից մեկի ժամանակ այդ խնդրին է անդրադառնում նաև Ա. Խանջյանը՝ բանաստեղծին առաջարկելով կազմակերպել «Սասնա ծռերի» հրատարակության գործը: Արդյունքը 1936 թվականին Ա հատորի լույսընծայումն էր Մ. Աբեղյանի խմբագրությամբ:

Թե՛ էպոսի բնագրում, թե՛ մշակումների մեջ առկա են նախաքրիստոնեական ու աստվածաշնչյան տարբեր մտքեր ու դրվագներ: Քրիստոնեությունն ընդունելով հանդերձ՝ սերունդներն իրենց հետ բերել ու

տանելու են հնագույն ավանդական սյուժեներն ու մոտիվները, որոնցով իդեալականացնում էին սիրելի հերոսներին: Չարենցը փառաբանում է դյուցազունների սերունդներին՝ Առյուծ Մհերին, Դավթին, Փոքր Մհերին՝ նրանց զարմը «արևագուն» կոչելով: Աստվածների ցեղից սերված այս կիսաստվածներն, իրոք, սերտորեն առնչվում են կրակի աստվածությանը: Արևագուն՝ արևից ծնված Մհերը «հուր ձի ուներ, կայծակե սուր», և իզուր չէ բանաստեղծը նրա ժողովրդին կոչում «սուրբ»: Մհերը «Սասնա ծռեր» հերոսավեպի մեջ է մտել Միհրի՝ արևային աստվածության պաշտամունքի անունից, որ լայն տարածում է ունեցել հայերի մեջ: Միհրի արևմտյան պաշտամունքը զգալիորեն տարբերվում էր նրա գրադաշտական պաշտամունքից, սակայն կային նաև համընկնումներ: Արևմուտքում առավել ցայտուն էին արևային, ռազմական հատկանիշները: Հայոց միհրապաշտության մեջ ցլի սպանությունը համընկնում է Մհերի՝ առյուծ ձևելուն: Ըստ արևմտյան ավանդության՝ Միհրը ծնվում է ժայռից, իսկ մեզ մոտ Փոքր Մհերը փակվում է Ագռավաքարում, որ նաև Մհերի դուռ է կոչվում: Թե՛ Միհրի ծնվելուն, թե՛ նրա՝ ժայռի մեջ փակված մնալուն ականատես են եղել հովիվները: Ավելորդ չենք համարում նշել, որ հայոց Արեգ ամիսը համապատասխանում է պարսկական Միհր ամսին, արևմտյան եկեղեցում Միհրի ծննդյան օրը (դեկտեմբերի 25) նույնացվել է Քրիստոսի ծննդին՝ իր մի շարք խորհրդապաշտական արարողություններով:

Էպոսի համահավաք բնագրում ընթերցում ենք, որ Սանասարը, նայելով երկինք ու ցույց տալով Արևին, հարցնում է. «Բա էս վերին տեխինն ի՞նչ ա»: Բաղդասարը պատասխանում է. «Կա՛ չկա՛ սա աստված ա: Անպայման մենք պտի ավտանք աստված»¹: Արևապաշտությունը հայոց իմաստասիրության մեջ հատուկ ընկալում է ձևավորել իրերի աշխարհի, բնության նկատմամբ: Միջնադարի մեծ մտածող Գրիգոր Մագիստրոսը 11-րդ դարի կեսերին գրում էր, որ արևապաշտները, իրենց արևորդի անվանելով, թեև արտաքնապես քրիստոնյա էին ձևանում, մնացել էին հին կրոնին:

Ինչպես Առյուծ-Մհերը, այնպես էլ իր ռամիկ ժողովուրդը ապրում էր «քրտինքով սուրբ»: Մհերն իշխան էր կարգվել հենց ժողովրդի կողմից, երբ «լուրթ լեռներում դեռ չէր բուսել // Դժնի բռնության ընծյուղը սև»: Չարենցը նկարագրում է «ազատ ու անարգել» կյանքը, գովերգում վեհ ու արդար աշխատանքը, որն, ինչպես վկայում է Աստվածաշունչը, «Աստուծոյ պարգեն է» (Ժողովող, Գ - 13): «Նա որ գողանում էր, թող էլ չգողանայ, այլ

մանաւանդ աշխատէ իր ձեռներովը բարին գործելով. որ ունենայ տալու պէտք ունեցողին» (Եփեսացիս, Դ - 28):

Միեւրդ, ծերության դուռ հասնելով, մտորում էր աշխարհի ունայնության մասին, զի չունէր ժառանգ, ինչը «անբուժելի ու մահաբեր» վիշտ է բերում նրան: Նա մտորում էր, որ երկիրն անտեր է մնալու՝ դառնալով հազար ու բյուր թշնամիների ավար: Կյանքի ունայնության մասին ընթերցում ենք Ժողովողի գրքում. «Եւ ես նայեցի իմ ձեռքերի արած բոլոր գործերին, եւ այն աշխատանքիս, որ աշխատելով արել էի. եւ ահա բոլորն ունայն էր եւ քամիի աշխատանք. եւ արեգակի տակին մի օգուտ չ'կայ» (Ժողովող, Ա - 11): Եթե ժառանգ չկա, ամեն ինչ վերածվում է նանիր տքնության. «Մէկը կայ որ մի երկրորդ չ'ունի, ոչ որդի ունի եւ ոչ եղբայր. բայց նորա զբաղմունքը վերջ չ'ունի... եւ չի ասում թե Որի՞ համար եմ ես աշխատում եւ զրկում իմ հոգիին բարիքից. սա էլ է ունայն, եւ չար տանջանք» (Ժողովող, Դ - 8):

Եվ ահա - մի վառ ու պայծառ օր -
Հրաշքով անհաս ու զորավոր -
Առյուծ-Միերին մեր ալևոր
Ծնվեց մի մանկիկ արևավոր: (IV, 177)

Ոչ միայն Միերը, այլև Սասնա ծռերն ընդհանրապես, հասարակ մարդիկ չեն. նրանք «Ազնանց ջնսից» են, դյուցազուններ, փահիլան կամ անձնահուր՝ Վահագնի նման անձամբ հրեղեն. «Նա հուր հեր ունէր, // Բոց ունէր մօրուս, // Եւ աչկունքն էին արեգակունք»: Այսպիսին էր և Միերի նորածին մանուկը.

Գիտեր նա արդեն, դյուցազնը ծեր,
Որ դյուցազուն է Դավիթն հուրհեր... (IV, 178)

Բանաստեղծը Դավթին կոչում է «մանուկ հրածին»: Սակայն Միերի մահից հետո Օհանը «Թաքցրեց նրա զենքերն հրցայտ» ու Դավթին խաշնարած կարգեց: Չարենցը «նեռ» է անվանում ոչ միայն Մսրամելիքին, այլև՝ Ձենով-Օհանին: Հիշենք նաև, որ բանաստեղծը նույնկերպ դիմել է և՛ Աթիլին, և՛ Ստալինին, «Որովհետեւ անօրէնութեան խորհուրդը արդէն զօրանում է» (Պօղոս առաքեալի երկրորդ թուղթը առ Թեսաղոնիկեցիս, Բ - 7): Պօղոս առաքյալը «նեռ»-ին անվանում է «անօրէնութեան մարդը՝ կորուստի որդին» (Պօղոս առաքեալի երկրորդ թուղթը առ

Թեսաղոնիկեցիս, Բ - 3): Որոշ հանգամանքներ պատճառ են հանդիսանում, որ Չարենցն այդպես դատի Օհանի մասին.

Գնաց մեր Օհանն, ահով-դողով
Արքայի առջև այն անողոք
Գլուխ խոնարհեց ազգով-ցեղով,
«Քո՛ն է» - աղերսեց - «Երկիր ու հող» -
Ընծայեց նրան ոսկի շողշող,
Գերության հանձնեց Սասունը ողջ:- (IV, 181)

Դավթի և Մսրամելիքի կռիվը հիշեցնում է Հին կտակարանի Դավթի և Գողիաթի մենամարտը: Մելիքի զորքերը սաստիկ հռնդյունով, թինդ ու կոչով արշավում են Սասմա վրա.

Ձենով-Օհանը, իշխանն հայոց
Բարձրացավ, տեսավ մի առավոտ
Մսրամելիքի զորքերն այն հոժ,
Տեսավ արշավանք մի մահահոտ
Եվ սիրտը նրա լցվեց ահով:- (IV, 187)

Այսպես էլ Գողիաթի խոսքերից զարհուրում ու վախենում են Սավուղն ու ողջ Իսրայելը. «Եւ Իսրայէլի բոլոր մարդիկը երբոր այն մարդին տեսան, նորա երեսիցը փախան եւ շատ վախեցան» (Ա Թագաւորաց, ԺԷ - 24): Ձենով Օհանի վախկոտությունն ու դժբախտություններին համակերպվելու հակումը, սակայն, նրա բնավորության հիմնական գծերը չեն համարվում: Նա մի հսկա է, որն էպոսի մեջ հաճախ հանդես է գալիս որպես ուժեղ կամքի տեր և դյուցազնական գործեր կատարելու ընդունակ անձնավորություն: Կան պատումներ, որոնց մեջ Օհանը, հակառակ Դավթի տված պատվերի, չի համբերում և հարձակվում է Մսրա Մելիքի բանակի վրա: Բնորոշ է նաև այն դեպքը, երբ Ձենով Հովանը, երազ տեսնելով, իմանում է Դավթի կյանքին սպառնացող վտանգի մասին և շտապում է հասնել կռվի վայրը: Ձիերի հետ ունեցած խոսակցության տեսարանը ցույց է տալիս Հովանի մեծ սերը դեպի Դավիթը և անհրաժեշտության դեպքում՝ նրա գործելու հերոսական թափն ու վճռականությունը:

Օհանից վերցնելով իր զենքն ու զրահը՝ Դավիթը շտապում է Մսրամելիքի բանակը: Չարենցն այն համեմատում է մորեխի հետ, «Որ Սասմա վրա քանի՛ օր էր // Եկել էր, նստել...»: Պատկերը նման է Հովհաննես առաքյալի հայտնության մի դրվագի. «Եւ մարախների

նմանութիւնը նման էր ձիերի, որ պատրաստուած են պատերազմի համար, եւ նորանց գլուխների վերայ իբրեւ պսակներ կային ոսկու նման. եւ նորանց երեսները մարդկանց երեսների նման. եւ մազեր ունէին կանանց մազերի պէս. եւ նորանց ատամներն առիծի ատամների նման էին: Եւ զրահներ ունէին ինչպէս երկաթէ զրահներ. եւ նորանց թելերի ծայնը նման էր շատ ձիերի կառքերի ծայնի, որ վազում են պատերազմ» (Յովհաննէս առաքեալի յայտնութիւնը, Թ-7-9):

Աստվածաշնչի Դավիթը ևս օժտված է անհանգիստ ու «ծուռ» բնությամբ: Եղբայրներից ավագը՝ Եղիաբը, բարկությամբ հանդիմանում է նրան՝ ասելով. «Դու ի՞նչու իջար այստեղ, եւ այն մի քանի ոչխարները անապատում որի՞ յանձնեցիր. ես քո հպարտութիւնը եւ քո սրտի չարութիւնը գիտեմ. անտարակոյս դու իջել ես պատերազմը տեսնելու» (Ա Թագաւորաց, ԺԷ - 28): Սավուլին համոզելու համար, որ իրեն թոյլ տա մենամարտել Գողիաթի հետ, Դավիթն ասում է. «Ծառադ իր հօր ոչխարները արածեցնում էր, եւ առիծը կամ արջը գալիս էր, եւ հօտերիցը ոչխար էր տանում: Ես նորա ետեւիցը գնում էի՝ նորան զարկում և նորա բերանիցը ազատում էի. եւ երբոր նա վեր էր կենում ինձ վերայ, մօրովիցը բռնում էի, զարկում և մեռցնում: Ծառադ առիծ էլ է մեռցրել, արջ էլ. եւ այս անթլփատ Փղշտացին էլ թող նորանց մէկի պէս լինի, որովհետեւ կենդանի Աստուծոյ զօրքերին նախատեց» (Ա Թագաւորաց, ԺԷ - 34-36):

Խորախորհուրդ իմաստ է դրված Մսրա աշխարհից եկած ծեր զինվորի խոսքում.

«Դավիթ» - բարբառեց զինվորը ծեր -
«Ինչու՞ ես մեր դեմ կռվի ելել,
«Մսրամեղիքն է, արքան այն նեռ,
«Մեզ քշել, բռնի Սասուն բերել.
«Ո՛վ Դավիթ» - կանչեց - «Ո՛վ միամիտ,
«Դյուցազո՛ւն Դավիթ՝ մեզ պես ռամիկ,
«Մսրամեղիքն է քո թշնամին,
«Դյուցա՛զն ես՝ գնա՛ դարանամիտ
«Մսրամեղիքի՛ց վրեժդ հանի»: (IV, 191-192)

Ասել է, թե ժողովուրդը մեղք չունի, պատերազմ հրահրողը մեկն է, որն էլ պիտի պատասխան տա իր գլխով, ինչպէս դա ուղղակի իմաստով անում է Աստվածաշնչի Բոքորի որդի Սաբէէն. «Եւ այն քաղաքից մի իմաստուն կին աղաղակեց. Լսեցէք, լսեցէք, մէկ ասեցէք Յովաբին՝ Մօտեցիր մինչեւ այստեղ որ խօսեմ քեզ հետ: Նա էլ մօտեցաւ նորան, եւ

կինն ասեց. Յովաբը դո՞ւ ես. եւ նա ասեց. Ես եմ. եւ նա ասեց նորան՝ Լսիր աղախնիդ խօսքերը. եւ նա ասեց. Լսում եմ: Եւ նա ասեց այսպէս՝ Առաջ այսպիսի խօսքեր էին խօսում թէ Աբէլումը թող հարցնեն եւ այնուհետեւ վերջացնեն: Ես Իսրայէլի խաղաղարարներիցն ու հաւատարիմներիցն եմ. դու ուզում ես Իսրայէլի մէջ մի մայրաքաղաք փչացնել. ի՞նչու համար բնաջինջ անես Տիրոջ ժառանգութիւնը: Եւ Յովաբը պատասխանեց եւ ասեց. Քաւ լիցի, քաւ լիցի ինձ, եթէ ես բնաջինջ անեմ կամ թէ քանդեմ: Բանը այդպէս չէ. այլ Եփրեմի սարիցը մի մարդ՝ անունը Սաբէէ որդի Բոքորի՝ իր ձեռքը բարձրացրել է Դաւիթ թագաւորի դէմ. տուէք միայն նորան եւ կ'գնամ այդ քաղաքի վերայից. եւ այն կինն ասեց Յովաբին. Ահա նորա գլուխը քեզ մօտ կը գցուի պարսպի այն կողմը: Եւ այն կինը գնաց իր իմաստութեամբը բոլոր ժողովրդի մօտ. եւ կտրեցին Բոքորի որդի Սաբէէի գլուխը եւ գցեցին Յովաբի մօտ. եւ նա փողը հնչեցրեց, եւ այն քաղաքի վերայից ցրուեցան ամեն մարդ իր վրանը, իսկ Յովաբը ետ դառաւ Երուսաղէմ թագաւորի մօտ» (Բ Թագաւորաց, Ի - 16-22):

Մարամելիքի և Դավթի մենամարտում առաջին զարկի «նախապատվությունը» տրվում է Մելիքին.

Երբ զարկեց Մելիքն հարվածն ուժեղ,

«Հո՛ղ դարձաւ Դավիթ» - դարձաւ ասեց. (IV, 197)

«Հող դառնալ» արտահայտությունը նույնպես սուրբգրային հիմք ունի, որ նշանակում է այս կյանքից իր հետ ոչինչ չի տանի: Ըստ Աստվածաշնչի՝ «Ամենը գնում է մեկ տէր, ամենը հողից է եղել եւ ամենը հող է դառնալու» (Ժողովող, Գ - 20): «Նորա հոգին դուրս կ'գայ, նա դէպի իր հողը կ'դառնայ, նոյն օրը կը կորչեն նորա խորհուրդները» (Սաղմոս, ՃԽԶ - 4): Կյանքի և մահվան մեծագույն գաղափարն է դրված էպոսում: Մեծ Միեւրը կյանքը տալիս է՝ ժառանգ ունենալու համար, իսկ Փոքր Միեւրը հոր անեծքով անժառանգ է մնում: Վերջինիս համար մահը վերածվում է անմահության: Դավթի ու Փոքր Միեւրի նախապատկերները երևում են անմահ ու անժառանգ Արտավազդի ու իր հոր՝ Արտաշեսի մեջ: Հոր անեծքով Մասիսի քաջքերը կապում են Արտավազդին, որ այնտեղ մնա ու լույս չտեսնի, իսկ Միեւրին «դժնի ուժերն» են տանում, «անհուն լեռան մթին քարայրում» փակում, որ «ընդմիջտ գերված մնա»: Ահա թե ինչի է ընդունակ Խոսքի ուժը. «Սկզբումն էր Բանը. եւ Բանն Աստուծոյ մօտ էր. եւ Բանն Աստուած էր» (Աւետարան ըստ Յովհաննու, Ա - 1): Ստացվում է՝

անեծքն ու օրհնությունն էլ աղոթքի պես ուժ ու զորություն ունեն: Սուրբգրային մի դրվագում երկու եղբայրներից մեկը՝ Հակոբը, խորամանկությամբ ստանում է հոր օրհնությունը, ինչի համար մյուս եղբայրը՝ Եսավը, ուզում է սպանել նրան (Ծննդոց, ԻԷ): Հայտնի է նաև Աստծո կողմից սահմանված «հնազանդության օրհնությունն ու անհնազանդության անեծքը»: Իսկ Չարենցն իր պոեմն ավարտում է՝ նզովք բարբառելով բոլոր նրանց, ովքեր բերում են ժողովրդին «մահ, ու մո՛ւտ, ու նե՛ո»:

Քանալի բառեր՝ գրական մշակումներ, նախաքրիստոնեական ու աստվածաշնչյան դրվագներ, ժառանգ, դյուցազունների սերունդ, կոիվ, կյանք ու մահ, անեծք և օրհնություն:

Օգտագործված գրականություն

1. Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1968:
2. Աստվածաշունչ, Ստոկհոլմի՝ Աստվածաշնչի թարգմանության ինստիտուտ, 1989:
3. Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, Եր., Հայպետհրատ, 1961:
4. Ա. Շիրակացի. Մատենագրություն, Երևան, 1979:
5. <http://armenianhouse.org/sasuntsi-david/preface.html>, Սասնա Ծռեր:

MYTHOLOGICAL AND BIBLICAL MOTIVES IN YEGHISHE CHARENTS'S EPIC POEM "DAVID OF SASUN"

A. D. SHIRINYAN

*Researcher at the Philological Faculty
Chair of Armenian Literature and Journalism of ASU*

The epic "David of Sasun" is fully saturated with mythological and biblical scenes. In this article it is shown by the poem of Yeghishe Charents's "David of Sasun". Time signals have imposed a deep seal on the literary formation of Charents, but the poet remained faithful to the original.

МИФОЛОГИЧЕСКИЕ И БИБЛЕЙСКИЕ МОТИВЫ В ПОЭМЕ ЕГИШЕ ЧАРЕНЦА „САСУНЦИ ДАВИД“

А. Д. ШИРИНЯН

Соискатель кафедры литературы и журналистики АргУ

Эпос «Сасунци Давид» полностью насыщен как мифологическими, так и библейскими мотивами. В этой статье это показано поэмой Егише Чаренца «Сасунци Давид». Сигналы времени наложили глубокую печать на литературное становление Чаренца, но поэт остался верен подлиннику.